

Տուեալ Աւստրիայի Վիեննայ կայսերական քաղաքը. յամի Տեառն 1842. Նոյեմբ. 29. մեր իշխանութեան օւթերորդ տարին:

Փերդինանդու 1. Ճ.

Ալէքսիանոս Նորչայ յ. ձ.
Թովհաննէս Եփեմայի յ. ձ.
Թովհ. Անդճի



፳ ሀ ፪ ፻ ፱ ፫ ፲

“ՀԱՅԱՑԹՈՒԼԿԱՆՆԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ
ՓԼՄԱՆԿԻ” ԸՌԻԹՈՎ

Մենք պզտիկ * Ն. Ա. յարգանքով այս
խնդիրը * Հանդես եմ օրհայ. թերթի Ներկայ
տարւոյ Ազդիչ Համարում, — մի չարք հե-
տաքրքրական եւ նրբամիտ դիտողութիւններից
յետոյ գալիս է այս հետեւանքին.

ա) ԹԷ՝ Հայոց Թաւականի Հաստատութեան
Ժամանակի ժամին խօսող «պատմագիրք (Յով.
կաթ., Եով. Դմառաւ., Ստորիկ, Վրկապոս, Վար-
դան...) չունին աս ջիւնին հէն է- Վաւեր-Վաւ աղ-
բիւրները եւ բաւական պատճառաւ չկայ ընդառ-
նի Հայերեան պատմական անձնորդ:

է) ԹԷ՝ Թ. դարէն յառաջ Հայոց (Թուա-
կան գրչութիւն չունէր:

Միեննայն ժամանակ՝ յիշելով Է. դարու հայ գիտնական Անանիա Շիրակացուն, որ ապրում էր Հայ թուականից գուցե 70—80 տարի յետոյ եւ որի սոմարագիտական քովանդակով ծանօթ պարտւոյ Զօռիկ ճառից օգտուել են շատերը մեր պատմագիրներէց, — Գեւ. յօգուածագիրը եղբակացնում է, թէ՛ «Անանիա ամենայն յօմարագիտումը պարտաւոր էր յիշելու (ա. ի. այդ հասիլ մէջ Հայոց թուականը, ինքէ ըլլար մեր եւ իցէ բան մը...» (ԱՆԷ, էջ 102, Ծան. 3)։

Այս առիթով ես կը ցանկայի՝ առանց մտնելու առ այժմ վիճարարութեան մէջ, մասնացող անէկ երկու առիթով պարբերօրէն, որ կապուած են իւր. Հիօթակացու անուն հետ եւ որ ըստ երեւութիւն անմեծօք են Մեն. յօգուած պարբեր: Այլ ինչիք է, թէ ողբան վաւերութեան եւ զօքա իբրեւ Հիօթակացու հեղինակութեանը:

Առաջինն է՝ կայսերաց Պատմութիւն, կոչուած մի շատ կարեւոր յիշատակարան, որից շատ քնդարձակ օգտուել են Ասողիկ եւ Ուխտ-

տանէն եւ մասամբ Մ. Խորենացի¹՝ եւ որ իր
լեզուով եւ ժամանակագրական ցուցումներով
միանգամայն յարմարվում է Հերակղացու ժա-
նանակին. գրութեաք աւարտվում է Փրկչ.
685—687 թուականով։ Չեմսպիրները եւ
Հերակղացու երկրի շաբոն են դասում գործն։²
Յամեսայն գէպս Է. գաբում գրութե կամ
թարգմանութե մի գործ է այս։ Արդ. «կայսե-
րաց զատուածիւնը»,՝ երկու անգամ սխառն է
էշյոք թուականը շատ բնական կերպով։ Աւա-
ջին անգամ ըստն ունեղողունին տալիով.

“Ե ի նորին (Յուստինիանոս Ա. 527—164 թ.)
 ԼԴ. ամի կարգեցին Աղեքսանդրացիք զԹԹ.
 ԴԹ. երորդն Զատկաց ԻԸ. եակ չըզազայու-
 թեամբ ՇԼԲ. ամաց բոլորակն: Եւ ի նշին թա-
 ւաւորին (Թ) ԻԵ. երորդ ամի Հւյ Խւււււււ կար-
 գեցաւ:”

Երկրորդ անգամ Հայ Ռեզիստենս գործ է
ածուած գրութաւոր զերլում, երբ յիշուում է
Խաղիւնների տիրապետութեան մասին. (այս հա-
տուածից եւս օգտուել է Արշակ, էջ 142,
կրճատելով).

« Ի սրբա (Յուստինիանու Բ, 685-692 թ.) առաջին ամին տրեբցին հիւսիսային ազգն որստին Հազորթ՝ Հայոց, Վրաց եւ Աղուանից եւ սպանին Ի պատերազմին զինչսան Հայոց, Վրաց եւ Վրացահայր յամանսն սահմի, որ ասի Ժ. Էրամայն Ի ՃԼԳ. Բառայնին Հայոց »

Երկրորդ գրուածքն է Համառօտ ժամանակագրութիւն յԱդամայ (իսկապէս՝ ժամանակաբարկան տղււակ), որ նոյնպէս կցուած է Էփրայիացու երկնային եւ որը իւր ժամանակագրական ցուցմամբ նշոյշայի պատշաճօժ է Ընանիայի ժամանակին: Ղիկննայի Մեծ. ՀՀ. Միթիթարեանց նոր քիւ 30 ձեռագրութիւն՝ վերջին “Ընուածք ականց եւ դունուորութիւնք նոյնի, յօգուածից առաջ կայ զետեղուած այդ տղււակը, որ Ադամայ մինչեւ Նեովը, Ջրհեղեղէ, Աշտարակն, Արբաշամ... եւ Քրիստոսի ծնունդն է հայգլօմ” մի աւ. մի զննելով թուրք, ապա “ի Քրիստոսն է ի կոտանանդիանօ Յ(ամ), աստի ի հոյ իւլ-լանն Միտք... եւ ի ծննդեանէն

1. *Эпос. 1-й* „Арш. Аршакиды“, I, кт 54—55, 173, 257, 328 *к. II (Сурхр.)* кт 65, 99, 127.

« 8^й 2^й. 1903, № 30, 1904. Иллюстра-
ции к статье в «Арх. арх.», I, 379:

Յ. Եսայիթ Լեռնադիր Ս. Էջմիածնի, 971թ., Nր. 102
Գեորգ Վաթող. ցուց. եւ Ս. Ղազարոս Մասանդարյանի
Nր. 739 Ճառքնախորհրդ:

և ՆՊՆ Հաստատման է, որից զբաղվել է Ասպիլ,
էջ 141 հրա. Ս. Մարխասեանի:

Ե 864 Ն. Թ. Ց-լու, Թոց. Ն. ձեռագրաց վերև, ԼԻ՛, էջ 177: Նման ժամանակագրական աղիւսակ, որ Սարկուսաց վրդ. է գործածուիմ (Անդ. էջ 172) Ն. Ցա- շան Շիրակացոց քաղած է համարում:

Բրիտանոսի ի Ս. Գրիգոր ԹԺԲ. դարձեալ ի ծննդնէն Բրիտանոսի ի Բէլ-լան ԸՊԳ. ի Լուսաւորէն Գրիգորէ ի Բէլ-լան Լոյս ՄԻԱՆ Անուհնէն մի քանի թուականներ կան Սահակին, Մեսրոպին եւ տառերի գիւտին վերաբերեալ, որ աղանաղեալ են երեւում գուցէ նման տառերի շփոթմամբ ղերբապէս, «ի Ս. Սահակայ ի Բէլ-լան ձԼԳ ի Բէլ-լան մինչեւ յերեւումնեոն կարապետին (Մահմադի) Կ. եւ յորժամ զերուսաղէմ ձեւ՝ 26, (այն է՝ 638թ. ըստ Սամուէլի)։ Յորանով վերջանում է ժամանակագր. աղեւտակը։

Այս եւս պետք է նկատողութեան առնել, որ Անան. Ըրիսակացու վերը յիշած Զ-ով ձառից անցնելու է, որ հեղինակը գրել է ժամանակագրեան ԻԸ. Կ-ան, «որով զամենայն համարն բովանդակեցի ԸԼԲ. կարգ եւ զատի մէկնեցի զմի մի կարգ առ մի մի տարին (էջ 24 առ. Պատկ.), — մի աշխատութիւն, որ մինչեւ այժմ զեռ գտնուած չէ։ Արդեօք այդ քսանեւթ թի կանոնի մէջ չէր յիշուած Լոյս Սահակը, չեմ կարծում որ ժողովուրդն պատշախտան կարողանար տալ այս հարցին ՄԵԺ. ։ Ն. Ա.

Առ այժմ այսչափ։

Մոսկուա, 28 Մարտի 1904թ.

ԼՈՒՋԱՐԱՆԱՆ ՌԵՍԻՐԱՆՆ ՅՐ. ԽԱՆԱԹԵԼՆՅՑ



ԱՅՈՒՐԱՅԻՆԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱՅԵԱՆ ԶԲԻՆՈՒՄՆԵՐԻՆԻՍՏԵԱՆ
ՊԵՐՈՎԱՅԵԱՆ ԲՈՐԵԼՈՎԱՆ-ՈՍՈՐԵՍ-
ՏՈՆԵԱՆ ՍԵՊՏԱՐԵՐԻՆԻ ՀԱՄԱՅՆՈՒՄՆ

(Ընթերցող-Բնակ)։

8. Մարտի (Մարտի, Արտի)։

Մարտի ըստածներն առաջին անգամ իր յիշուի — Ամադար ձեւով — Սողմանար Բ. ի ժամանակ, Արիկայ թագաւորութեան 24-րդ տարին նախ Ամադար ըստածներուն երկիրն եւ ապա Արագիւտ եւ Հարհար իջաւ։ Սամարիամնի երրորդ արշաւանքին առնելու ասպատակութիւն մ'ալ եղաւ զէպ ի Գիլգիլանդաւ, որք՝ այս ասպատակութեան վրայ արուած տեղեկութեան անմիջապէս իր յաջորդէ՝ Մատաիացւոց գէմ մղուած պատերազմին վրայ արուած տեղեկութիւնը։ Մատաիացիք «Սպիտակ լեռը, փախան. Ասորեստանցւոց ըստակը՝ Հանա-Իր-Ի-Իր քանակէն 23,000 ռոսանաւոր զենուոր Եւ 120 հոգեմեղ զինուոր ջարդեց պատերազմի մէջ։ Այս իշխանին իշխանանիւ կործանեցաւ։ Նուաճեալ եւ հրոյ մատնեալ մարական քաղաքներուն թիւը 1200 է կ'ըսուի՝ սպիրական չափա-

զանցութեամբ։ Հանասիրուի երկրէն Ասորեստանցւոց թագաւորը՝ Զարբուս ինչնեւուն վրայէն Արագիւտ անցաւ։

Ուսմանիւրարի Գ. ի քով՝ Մադաի հետեւեալ կարգով մեր գիմացը կ'էլէ՝ Նլլիպի, Հարհար, Արագիւտ, Մուսու, Մադաի, Գիլգիլանդա եւն։ Անուագիր ցուցակէն իր տեսնեց որ այս թագաւորին առնելը (811 783 Ն. Բ. Բ.) 8 արշաւանք եղած է Մադաիի գէմ. նմանապէս իր յիշուի արշաւանք մը՝ Ասորքան Գ. ի (772—755) առնելով։

Մադաիացիք Տիգրաթպիղեներ Գ. ի շատ հոգ ու աշխատութիւն պատճառեցին։ Թագաւորն անձամբ ասոցի գէմ երկու անգամ արշաւեց 7է՝ եւ 737 (թագաւորութեան 2-րդ եւ 9-րդ) տարիներուն։ Անձամբ գործի թեանց մէջ երկուցի ցուցանիւր պահուած կամ՝ միջադէպ Մադաի, այն զաւառնեւրուն, զորոնք առած է այս թագաւորը։ Այս գործառնութեանց առաջինէն է յայտնապէս այն տեղեկութիւնը, որ կ'ըսէ թէ Ասորեստանցւոց թագաւորը 60,500 հոգի եւ անոնց ստացածները, ձիերը, . . . ուղտերը, եղջեր եւ սղեւաքս անհամար հօտերն առաւ տարաւ։ Երրորդ արշաւանքին հետեւութիւն եղաւ՝ «8650 հոգւոյ, . . . [պակտ կամ եղծեմ մաս] . . . 300 ջուրայ, 660 իշու, 1350 արջաւի, 19,000 ոչխարի» տարուելը։ Բայց աստի Տիգրաթպիղեներ Գ. ի Ասորքանիւնի առնուելու կուտակութիւն կամ զորագետին յանձնուեցաւ յանդուգն արշաւանք մը, որ ուղղուած էր ի մասնաւորի արեւելեան հօգը Մադաի գէմ։ Այս վերջին ձեռնարկութեան ժամանակն պահով կերպով ճշգրիտ կարելի չէ, վասն զի այս մասին մեր ունեցած ծանօթութեան աղբիւրը միայն պարձանց արձանագրութիւնն է։ Հաւանաբար է որ այս արշաւանքին այն ժամանակ եղած է, երբ Ասորեստանցւոց թագաւորներէն անձամբ կատարուած երկու արշաւանքներէն մին տեղի կ'ունենար։

Ըստ երեւութիւն Սարգան ամէնէն առեւել աստակութեամբ կուռած է Մարաց գէմ՝ որ որ քան զոր կ'աճէր անդադարնոր եկողներով։ Պարձանց արձանագրութիւնն եւ Տարեգրութիւնը կ'աւանդեն բազմաթիւ մարական երկիրներու անուններ. խորտագրի արձանագրութեան համեմատ թագաւորն ընդ ամէնը մարական 34 գաւառ նուաճած էւ ստեղծած է որ տարեկան որոշ թուով ձի հարկ տաւ։ Նմանապէս արտաքայ կարգի ամրակութիւններով օգնած է Հարհարի (Կար-Հարբուկին), որ ամէնէն կարեւոր կէտն էր Ասորեստանցւոց աղի ելքութիւնը կանդուն պահեցաւ։ Մադաիի գէմ մեծ արշաւանք մ'ալ եղած է թագաւորութեանը 6-րդ տարին. նոյն տարին 28 «քաղաքատէր» հարկաւորութիւն մը յանձն առին. նմանապէս յարկոր տարին 22 մար ցեղապետ իրենց ընծաները խաւրեցին։ Այս գեղաւորն կրկնուեցան Սարգանի թագաւորութեան 8-րդ եւ 9-րդ տարիները վերջին տարին մինչեւ անգամ 42 «քաղաքատէր» առեւել 4609 (ձի, ջուր, արջաւ, եւ անհամար ոչխար)։

Սան հերի Մարդին հարկ առաւ, երբ Նլլիպիէն գալով մօտեցաւ։ Երբեք երբ մեծարանութիւն է, երբ այս թագաւորը կ'ըսէ թէ իր նախ-